ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

10.12.2015 11:20

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում երեկ՝ դեկտեմբերի 9-ին, հյուրընկալվել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը: Հանդիպումը կազմակերպել է Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ):

Պատվիրակության կազմում են եղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության փաստաբանների պալատի գործադիր տնօրեն Վերոնիկա Հորերը, իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Օտմար Քուրին, ինչպես նաև IRZ-ի ներկայացուցիչ Ֆրանցիսկա Ջիմոնը:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջույնի խոսքում կարևորել է երկու երկրների փաստաբանական համայնքների միջև համագործակցությունը՝ նշելով, որ գերմանացի գործընկերների հետ սա արդեն երկրորդ հանդիպումն է (առաջինը եղել է 2015թ. նոյեմբերին Թբիլիսիում), որտեղ կողմերի քննարկման արդյունքում պարզ է դարձել, որ երկու երկրներում էլ (Հայաստան, Գերմանիա) փաստաբանների խնդիրների ու մարտահրավերների էությունների միջև կան ընդհանրություններ: Գերմանացի գործընկերներին ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի կառուցվածքը, ինչպես նաև Հանրային պաշտպանի գրասենյակի և փաստաբանական դպրոցի գործունեությունների ուղիները:

ԳԴՀ փաստաբանների պալատի գործադիր տնօրեն Վերոնիկա Հորերը Գերմանիայի 165.000 փաստաբանների անունից ողջունել է փաստաբանների պալատի ներկայացուցիչներին և նշել է, որ դաշնային պալատի իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Օտմար Քուրին հանդիսանում է քրեական գործերով Գերմանիայի լավագույն փաստաբաններից մեկը, ինչպես նաև ղեկավարում է Համբուրգ քաղաքի տարածաշրջանային փաստաբանների պալատը:

Պարոն Օտմար Քուրին իր ելույթում ներկայացրել է Գերմանիայում փաստաբանական գործի զարգացման պատմությունը: Նրա խոսքով, նախկինում փաստաբանները գտնվում էին պետության հոգածության ներքո, սակայն հետագայում պետությունը փոխանցել է այն փաստաբանների ինքնակառավարմանը:

Գերմանիայում գործում են 28 փաստաբանական պալատներ, որոնք հավասարեցված են Գերմանիայում գործող դատարանների թվին: Այդ 28 փաստաբանական պալատներից միայն 6-7 են առավել խոշորները:

Գերմանացի գործընկերներին հետաքրքրել է Հայաստանում փաստաբանների ժողովի կազմակերպման առանձնահատկությունները, քանի որ տարածաշրջանային պալատներում շատ դժվար է լինում կազմակերպել ընդհանուր ժողովներ: Չեն կարողանում նույնիսկ ապահովել փաստաբանների 10 տոկոսի մասնակցությունը:

Հայկական կողմը ներկայացրել է Հայաստանի փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման հեռակա կարգը, որի ընթացքում յուրաքանչյուր ընտրող փաստաբան հնարավորություն է ունենում ամբողջ օրվա ընթացքում գալ և գաղտնի քվեարկության միջոցով իր դիրքորոշումը հայտնել՝ նախապես ներկայացված օրակարգային հարցի կամ նախապես գրանցված թեկնածուի վերաբերյալ, ինչը մեծացնում է ընդհանուր ժողովին փաստաբանների մասնակցության հնարավորությունը:

Համբուրգի փաստաբանների պալատը, ըստ գերմանացի գործընկերոջ, կառավարվում է փաստաբանների ընդհանուր ժողովի կողմից ընտրված վարչության 24 անդամների և վերջիններիս կողմից ընտրված նախագահության կողմից: Պալատն ունի 10.000 անդամ: Գերմանիայի փաստաբանների անդամավճարի տարեկան գումարը կազմում է 280 եվրո, որը վճարվում է տարեկան կարգով՝ նախապես:

Հայաստանի փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական տնօրեն Իրինա Փիլոյանը ներկայացրել են Հայաստանի Հանրապետության փաստաբանության մասին օրենքը և դրանից բխող կարգավորումները:

Այսօր՝ դեկտեմբերի 10-ին, հայ փաստաբանները գերմանացի գործընկերների հետ միասին քննարկելու են ‘Պաշտպանի դերը նախաքննության և դատաքննության ընթացքում’ թեմային առնչվող հարցեր՝ վերապատրաստման դասընթացի շրջանակում:

IRZ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })